ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական Վարչական գործ թիվ **ՎԴ/4068/05/23**
դատարանի որոշում **2026թ.**
Վարչական գործ թիվ ՎԴ/4068/05/23
Նախագահող դատավոր՝ Կ. Գևորգյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Գ. Սոսյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 20-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ փաստաբանների պալատի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.07.2025 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Արսեն Դավթյանի ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ)՝ թիվ ԿԳ-22064 կարգապահական գործով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 29.11.2022 թվականի թիվ ԿԳ/67-Ա որոշումը (այսուհետ՝ Թիվ ԿԳ/67-Ա որոշում) անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Արսեն Դավթյանը պահանջել է անվավեր ճանաչել Թիվ ԿԳ/67-Ա որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 20.11.2023 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.07.2025 թվականի որոշմամբ Արսեն Դավթյանի վերաքննիչ

բողոքն ամբողջությամբ բավարարվել է՝ Դատարանի 20.11.2023 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է։

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատը (ներկայացուցիչ՝ Հայկ Ծատուրյան)։

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արսեն Դավթյանը (ներկայացուցիչ՝ Գևորգ Դավթյան)։

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը, 19-րդ հոդվածի 5-րդ մասը, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 և 9.1.3 ենթակետերը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, խախտել է «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 8-րդ կետը։

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Պալատի խորհրդի 04.03.2020 թվականի թիվ 5/11-Լ որոշմամբ ընդամենը պարզեցվել է անդամավճարի պարտքի մարման առաջնահերթությունը, որի համաձայն՝ վճարված գումարի անբավարարության դեպքում, առաջին հերթին մարվում են փաստաբանի համար ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը՝ անկախ վճարման փաստաթղթում նշված նպատակից։

Վերաքննիչ դատարանը վճիռը բեկանելու և փոփոխելու՝ հայցադիմումը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ մինչև 04.03.2020 թվականը չկատարված և կուտակված պարտավորությունների նկատմամբ չի կարող կիրառվել «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 8-րդ կետով նախատեսված անդամավճարի մարման առաջնահերթության կանոնը, քանի որ դրա արդյունքում խախտվում է անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտի հետադարձ ուժի բացառման կանոնը։

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 8-րդ կետի փոփոխությունները չեն նախատեսում Արսեն Դավթյանի իրավական վիճակը վատթարացնող որևէ դրույթ, քանի որ «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 8-րդ կետով ոչ թե սահմանվել են նոր չափանիշներ, այլ պարզեցվել և առավել տեսանելի են դարձվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ կետը և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 ենթակետը, ինչն անհրաժեշտ է իրավական որոշակիության ապահովման և ըստ այդմ՝ իրավակիրառ պրակտիկայում կամայական մոտեցումները կանխելու համար։

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ յուրաքանչյուր փաստաբանի համար անդամավճարի վճարման ընդհանուր պարտականությունը կրում է մշտական բնույթ և այդ կապակցությամբ ծավալվող

իրավահարաբերությունները չեն կարող ընդհատվել և կրկին շարունակվել՝ ելնելով հերթական ամսվա վճարումը չկատարելու փաստից։

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ինչպես մինչև կարգի փոփոխությունը, այնպես էլ դրանից հետո, ըստ էության, դրամական միջոցների անբավարարության դեպքում դրանք բաշխվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված կարգով և ուղղվել են նույն՝ հիմնական պարտավորության մարմանը։

Այսինքն, եթե հայցվորը՝ որպես փաստաբան, նախկինում չէր կատարել իր պարտականությունը և չէր վճարել որոշակի ժամանակահատվածում անդամավճարը, ապա դա չի նշանակում, որ չկատարված պարտականությունն այլևս ենթակա չէ կատարման։

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ 04.03.2020 թվականից հետո հայցվորի կողմից կրկին անդամավճարի ժամանակին բավարար չափով մարումներ չապահովելու պայմաններում, վերջինիս պարտքն անդամավճարի մասով ևս հատել է սահմանաչափը, ինչը հիմք է հանդիսացել Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 16.08.2022 թվականի թիվ 231-Ա/ԿԳ-22064 որոշմամբ կարգապահական վարույթ հարուցելու և դրա արդյունքներով Թիվ ԿԳ/67-Ա որոշմամբ հայցվորին պատասխանատվության ենթարկելու համար։

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.07.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 20.11.2023 թվականի վճռին։

2.2. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Սույն գործով խնդրո առարկա հանդիսացող ենթադրյալ անդամավճարի չվճարման ժամանակահատվածը վերաբերում է տարիներ առաջ գոյացած պարտավորությանը և այն պատճառաբանությունը, որ հայցվորի կողմից վճարված անդամավճարներն ուղղվել են այդ պարտքի մարմանը՝ հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 8-րդ կետի պահանջը, ապա դա ակնհայտ անհիմն է։

Նշված նորմը փոփոխվել է 19.09.2019 թվականի թիվ 17/16-Լ որոշմամբ և լրացվել է 04.03.2020 թվականի թիվ 5/11-Լ որոշմամբ։ Այսինքն՝ այն ժամանակ, երբ սույն գործով փաստաբանի նկատմամբ անդամավճարի ենթադրյալ առաջացման պարտքը գոյացել է ավելի վաղ, հետևաբար այդ որոշումից առաջ ծագած հարաբերությունների նկատմամբ այն չէր կարող կիրառվել։

Ինչ վերաբերում է այդ մասով վճռաբեկ բողոքի այն փաստարկին, ըստ որի՝ նշված որոշմամբ ընդամենը պարզեցվել է պարտքի մարման առաջնահերթությունը, ապա դա չունի որևէ փաստական և իրավական հիմք։ Ավելին՝ նման պարզեցման դեպքում ՀՀ փաստաբանների պալատը կարող էր տալ իրավական ակտի պարզաբանում և ոչ ավելին։

Ինչպես սույն գործով պատասխանողը, այնպես էլ Դատարանը 04.03.2020 թվականի թիվ 5/11-Լ կարգի փոփոխությամբ սահմանված նորմը հետադարձորեն կիրառել են դրանից առաջ ծագած իրավահարաբերության նկատմամբ, այդ կերպ որոշակի ամիսների համար վճարված գումարները դիտել որպես նախկին անդամավճարների չվճարման հիմքով առաջացած

ենթադրյալ պարտքի մարում, ինչը որևէ իրավական հիմք չունի և արգելվում է նաև ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածով, ինչն իրավացիորեն հավաստել է Վերաքննիչ դատարանը։

Տվյալ դեպքում հայցվորը, օգտվելով իր ազատ գործելու իրավունքից, իր հայեցողությամբ տնօրինել է իրեն պատկանող դրամական միջոցները՝ դրանք ուղղելով իր՝ որպես փաստաբանի համար սահմանված անդամավճարի պարտավորության կատարմանը միայն իր կողմից նշված որոշակի ժամանակահատվածի համար։ Արսեն Դավթյանի կողմից կատարված վճարումներն առանց իր կամքի չէին կարող վերագրվել նախկին պարտքերի մարմանը։ Մինչդեռ, սույն պարագայում հայցվորի կողմից որոշակի ժամանակահատվածի համար վճարված գումարները լոկալ իրավական նորմի՝ 2020 թվականի լրացմամբ «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 8-րդ կետի կիրառմամբ առանց հայցվորի համաձայնության ուղղվել են վաղեմության ժամկետից դուրս իրեն վերագրված ենթադրյալ պարտքերի մարմանը, ինչը ոչ միայն հակասահմանադրական է, այլև որևէ կերպ նպատակ չի հետապնդում պաշտպանելու այլոց հիմնական իրավունքները և ազատությունները։

Վերաքննիչ դատարանը հանգել է իրավական և օբյեկտիվ գնահատականի, ուստի վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման։

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Պալատի խորհրդի 06.09.2019 թվականի «Փաստաբան Արսեն Դավթյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին (Անդամավճարի գործով)» թիվ ԿԳ/128-Ա որոշմամբ (կարգապահական գործ թիվ ԿԳ-19010) Արսեն Դավթյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճվել է՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) թեև փաստաբան Արսեն Դավթյանը թույլ է տվել կարգապահական խախտում, այդուհանդերձ այն իրականացրել է մեղքի բացակայության պայմաններում, որպիսի դեպքում բացակայում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:*

Միևնույն ժամանակ Խորհուրդը հարկ է համարում ընդգծել, որ կարգապահական վարույթի կարճումը չի հանդիսանում պարտավորության դադարեցման հիմք և փաստաբանին չի ազատում անդամավճարի (215.000 (…) ՀՀ դրամ գումար) պարտքը վճարելու պարտավորությունից» **(հատոր 1-ին, գ.թ. 12-14)**.

2) Պալատի գլխավոր հաշվապահի և գանձապահի կողմից 15.08.2022 թվականին տրված «Փաստաբան Արսեն Դավթյանի անդամավճարի պարտքի վերաբերյալ» տեղեկանքի համաձայն՝ *«(…) փաստաբան Արսեն Դավթյանի (…) անդամավճարի ընդհանուր պարտքը 15.08.2022թ. դրությամբ կազմում է 200.000 (…) ՀՀ դրամ, որից վերջին 18 ամիսների համար՝ 2021թ. հունվարից 2022թ. հունիս ամիսը ներառյալ, կազմում է 90.000 (…) ՀՀ դրամ և վերջինս չի վճարել հերթական ամսվա անդամավճարը»* **(հատոր 1-ին, գ.թ. 51)**.

3) «Արարատբանկ» ԲԲԸ-ի մասնաճյուղի կառավարչի կողմից 08.06.2023 թվականին տրվել է թիվ 85/161 տեղեկանքն առ այն, որ Արսեն Դավթյանը

19.04.2019 թվականից մինչև 07.06.2023 թվականը ներառյալ կատարել է ամսական անդամավճար՝ «արտոնագիր թիվ 722 Դավթյան Արսեն Գրիգորի վճարում ընդհանուր 255.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 29)**.

4) 04.03.2020 թվականից մինչ 2022 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածի համար հայցվորի կողմից կատարված վճարումներն ուղղվել են նախկինում կուտակված 215.000 ՀՀ դրամի չափով անդամավճարի պարտավորությունների մարմանը **(անվիճելի փաստ).**

5) Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 16.08.2022 թվականի «Փաստաբան Արսեն Գրիգորի Դավթյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 231-Ա/ԿԳ-22064 որոշմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 5-րդ մասի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով Արսեն Դավթյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ **(հատոր 1-ին, գ.թ. 52-54)**.

6) Պալատի աշխատակազմի ղեկավարի 28.11.2022 թվականի թիվ ԿԳ/403-22 տեղեկանքի համաձայն՝ Արսեն Դավթյանը փաստաբան է հանդիսանում 19.07.2007 թվականից և տեղեկանքը տրամադրելու օրվա դրությամբ չի ունեցել կարգապահական տույժեր **(հատոր 1-ին, գ.թ. 65)**.

7) Պալատի գլխավոր հաշվապահի և գանձապահի կողմից 29.11.2022 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Արսեն Դավթյանի կողմից Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 16.08.2022 թվականի թիվ 231-Ա/ԿԳ-22064 որոշմամբ՝ վերջին 18 ամիսների համար կարգապահական վարույթով հարուցված անդամավճարի 90.000 ՀՀ դրամ պարտքը չի մարվել: Արսեն Դավթյանի անդամավճարի 200.000 ՀՀ դրամ ընդհանուր պարտքից վճարվել է 15.000 ՀՀ դրամ և 29.11.2022 թվականի դրությամբ Արսեն Դավթյանի անդամավճարի պարտքը կազմում է 200.000 ՀՀ դրամ՝ 2022 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ **(հատոր 1-ին, գ.թ. 66)**.

8) Պալատի խորհրդի 06.09.2019 թվականի «Փաստաբան Արսեն Դավթյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին (Անդամավճարի գործով)» թիվ ԿԳ/67-Ա որոշման (կարգապահական գործ թիվ ԿԳ-22064) 1-ին կետով Արսեն Դավթյանը մեղավոր է ճանաչվել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 5-րդ մասի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 և 9.1.3 ենթակետերի պահանջների խախտման համար, իսկ 2-րդ կետով նրա նկատմամբ կիրառվել է տույժ՝ «խիստ նկատողություն» **(հատոր 1-ին, գ.թ. 68-73):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-

րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (այսուհետ նաև՝ Օրենք) 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 5-րդ մասի խախտման հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- արդյո՞ք «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով անդամավճարներ մուծելու փաստաբանի պարտականության համատեքստում վերջինիս կողմից վճարված անդամավճարները փաստաբանի պարտավորությունների մարմանն ուղղելու հաջորդականությունը սահմանող ներքին իրավական ակտը կարող է որակվել փաստաբանի իրավական վիճակը վատթարացնող:

Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում վկայակոչել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ ծագող հարաբերությունների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ այդ հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը պատկանում են հանրային իրավունքին, քանի որ դրանք փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելը լիազորում են բացառապես ՀՀ փաստաբանների պալատին: Ընդ որում, փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը կարգավորվում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև փաստաբանական պալատի խորհրդի կողմից ընդունված Փաստաբանի վարքագծի կանոնագրքով, որն իր հերթին միտված է սահմանելու թույլատրելի վարքագծի այն կանոնները, որոնցով պետք է առաջնորդվեն փաստաբաններն իրենց փաստաբանական գործունեության ողջ ընթացքում:

Հաջորդիվ անդրադառնալով իրավահարաբերության մասնակիցների միջև ենթակարգության-վերադասության առկայությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Պալատ-փաստաբան հարաբերությունները բնորոշվում են նաև ցանկացած մասնավոր, այդ թվում՝ աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք հանդիսացող գործարքի (պայմանագրի) բացակայությամբ: Պալատի խորհրդի կողմից փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը կայացվում է Պալատի հանրային իշխանական լիազորությունների գործադրման արդյունքում և միակողմանի ազդեցություն է ունենում հասցեատեր հանդիսացող փաստաբանի համար:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անհրաժեշտ է լրացնել ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ընդգծելով, որ հանրային իրավահարաբերություններում որպես հանրային իշխանության կրող կարող են հանդես գալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության կողմից օրենքով պատվիրակված հանրային գործառույթ իրականացնող մասնավոր անձինք:

ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է, որ ինչ վերաբերում է նման գործերի քննության կարգին, ապա նշված լրացումով օրենսդիրը նախատեսել է, որ դրանց վրա տարածվում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վիճարկման կամ պարտավորեցման կամ գործողության կատարման կամ ճանաչման հայցի կանոնները:

Ելնելով ամբողջ վերոգրյալից, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը վիճարկելու հայցերի նկատմամբ ևս կիրառելի են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ վիճարկման հայցերին վերաբերող իրավական նորմերը: *(տե՛ս, Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի թիվ ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.05.2022 թվականի որոշումը):*

Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը՝ սահմանում է փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի ու այլ վճարների, ինչպես նաև փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգը:

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը 26.12.2013 թվականի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատել է նոր խմբագրությամբ «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգը» (այսուհետ նաև՝ Կարգ), որի 2-րդ կետում ամրագրվել է, որ նույն կարգը պարտադիր է բոլոր հավակնորդների, փաստաբանների, փաստաբանի օգնականների և Պալատի կողմից հավատարմագրված այլ պետության փաստաբանների համար:

Կարգի 7-րդ կետի համաձայն՝ փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:

Կարգի՝ մինչև 04.03.2020 թվականի թիվ 5/11-Լ որոշմամբ կատարված լրացումը գործող խմբագրությամբ 8-րդ կետի համաձայն՝ առաջին անդամավճարի վճարման պարտականությունը փաստաբանի մոտ ծագում է Պալատի խորհրդի՝ Պալատի կազմում անդամագրելու և փաստաբանական գործունեության արտոնագիր տրամադրելու որոշման ընդունման օրվանից, (...):

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.03.2020 թվականի թիվ 5/11-Լ որոշման 1-ին կետով Կարգի 8-րդ կետը լրացվել է հետևյալ նախադասությամբ. *«Փաստաբանի անդամավճարը վճարելու պարտավորությունը լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում, **առաջին հերթին մարվում են փաստաբանի համար ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը՝ անկախ վճարման փաստաթղթում նշված նպատակից**: Փաստաբանի անդամավճարի ժամկետանց պարտքի գումարը ինքնաշխատ ձևով միացվում է փաստաբանի*

անդամավճարի հերթական պարտքի գումարին և ենթակա է վճարման հերթական անդամավճարը վճարելու ժամկետում»:

Վերոգրյալ իրավակարգավորումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստաբանը պարտավոր է յուրաքանչյուր ամսվա համար հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը մուծել փաստաբանների պալատի խորհրդի սահմանած չափով և կարգով անդամավճար: Ընդ որում, Կարգի՝ մինչև 04.03.2020 թվականի թիվ 5/11-Լ որոշմամբ կատարված լրացումը գործող խմբագրությամբ 8-րդ կետով կարգավորված է եղել փաստաբանի մոտ առաջին անդամավճարի վճարման պարտականության ծագման պահը, որը հանդիսացել է Պալատի խորհրդի՝ Պալատի կազմում անդամագրելու և փաստաբանական գործունեության արտոնագիր տրամադրելու որոշման ընդունման օրը: Մնացած դեպքերում գործել է յուրաքանչյուր ամսվա համար հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը Պալատի խորհրդի սահմանած չափով և կարգով անդամավճարը վճարելու Օրենքով նախատեսված՝ փաստաբանի պարտականությունը: Այլ կերպ ասած՝ փաստաբանը պարտավորված է առաջին անդամավճարը մուծել Պալատի խորհրդի՝ Պալատի կազմում անդամագրելու և փաստաբանական գործունեության արտոնագիր տրամադրելու որոշման ընդունման օրը, իսկ այնուհետև՝ Պալատի խորհրդի սահմանած չափով և կարգով անդամավճարը վճարել յուրաքանչյուր ամսվա համար հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:

Անդրադառնալով Պալատի խորհրդի 04.03.2020 թվականի թիվ 5/11-Լ որոշման 1-ին կետով Կարգի 8-րդ կետում կատարված լրացմանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

Իրավական ակտերի հետադարձ ուժի խնդրին անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանը 29.11.2011 թվականի թիվ ՍԴՈ-1000 որոշմամբ՝ արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, *որ «(…) ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից»:*

ՀՀ սահմանադրական դատարանն իր մեկ այլ որոշմամբ անդրադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությանը՝ ընդգծել է, որ *«(…) անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը:*

(…) Վերջինս հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր

բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով» (տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 15.08.2008 թվականի թիվ ՍԴՈ-723 որոշումը):

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին վերաբերող օրենսդրական տեխնիկայի, նորմատիվ իրավական ակտի կառուցվածքի, նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նորմատիվ իրավական ակտերի գործողությունը դադարեցնելու, ժամկետների հաշվարկման վերաբերյալ դրույթների գործողությունը **տարածվում է անհատական և ներքին իրավական ակտերի վրա, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ այն նորմատիվ իրավական ակտով, որով նախատեսվել է անհատական կամ ներքին իրավական ակտի ընդունում:**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել են նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, որոնց թվին է դասվում նաև ներքին իրավական ակտը, որը նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ է, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխան՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, իսկ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Վերը վկայակոչված իրավակարգավորումների համադրված մեկնաբանությունից հետևում է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի իմաստով ներքին իրավական ակտ է հանդիսանում նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտը, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից: Ըստ այդմ՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիության վերաբերյալ ՀՀ սահմանադրական

դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև ներքին իրավական ակտերի նկատմամբ։

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքի կիրառելիությունն ուղղակիորեն պայմանավորված է խնդրո առարկա կոնկրետ նորմի բնույթով, մասնավորապես անձի իրավական վիճակի վրա դրա վատթարացնող ազդեցությամբ։ Այլ կերպ ասած, օրենքներին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ անվիճելի է անձի իրավական վիճակի վրա դրա վատթարացնող ազդեցությունը։

Վերոգրյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով Պալատի խորհրդի 04.03.2020 թվականի թիվ 5/11-Լ որոշման 1-ին կետով Կարգի 8-րդ կետում կատարված լրացմանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ լրացված նոր նախադասությամբ սահմանվել է կատարված վճարումները փաստաբանի պարտավորությունների մարմանն ուղղելու հաջորդականությունը, ըստ որի՝ **առաջին հերթին մարման ենթակա է դառնում փաստաբանի համար ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը՝ անկախ վճարման փաստաթղթում նշված նպատակից**:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Պալատի խորհրդի 04.03.2020 թվականի թիվ 5/11-Լ որոշման 1-ին կետով Կարգի 8-րդ կետում կատարված լրացումը որևէ կերպ չի վերացնում անդամավճարներ մուծելու՝ Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված փաստաբանի պարտավորությունը կամ վերջինիս չի ծանրաբեռնում նոր՝ օրենքով չնախատեսված պարտավորությամբ։ Նշված լրացումը, ինչպես վերը նշվեց, վերաբերում է բացառապես կատարված վճարումները փաստաբանի պարտավորությունների մարմանն ուղղելու հաջորդականությանը՝ պայմանավորված անդամավճարները չվճարելու հետևանքով վերջինիս պարտականությունների առկայության հանգամանքով։ Այսինքն՝ Պալատի խորհրդի 04.03.2020 թվականի թիվ 5/11-Լ որոշման 1-ին կետով Կարգի 8-րդ կետում կատարված լրացման հասցեատերը ոչ թե փաստաբանն է, այլ՝ Պալատը, որի խնդիրն է հանդիսանում, ի թիվս այլնի, նաև իր անդամների կողմից «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելը (Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ)։ Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նաև փաստաբանների անդամավճարներից է ձևավորվում Պալատի գույքը (Օրենքի 15-րդ հոդված)՝ Պալատի անդամների կողմից Օրենքի, Պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման կատարման նկատմամբ վերահսկողությունը տարածվում է նաև անդամավճարների մուծումների նկատմամբ, որոնք փաստացի Պալատի հաշվապահությունը վարելու արդյունքում ուղղվում են փաստաբանի պարտավորությունների մարմանը։ Ավելին, սահմանած ժամկետում փաստաբանի անդամավճար չվճարելու վերաբերյալ փաստաբանների պալատի հաշվապահի ներկայացրած տեղեկանքը, համաձայն Օրենքի՝ «Կարգապահական վարույթի իրականացման կարգը, փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթները

և հիմքերը» վերտառությամբ 39.1-ին հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսանում, ինչից հետևում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված փաստաբանի պարտավորության կատարման նկատմամբ վերահսկողությունը, ըստ այդմ նաև՝ մուծված անդամավճարի գումարներն այդ պարտավորությունների մարմանն ուղղելու գործառույթն իրականացվում է Պալատի իրավասու անձի կողմից։

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Պալատի խորհրդի 04.03.2020 թվականի թիվ 5/11-Լ որոշման 1-ին կետով Կարգի 8-րդ կետում կատարված լրացումը, այն է՝ *«Փաստաբանի անդամավճարը վճարելու պարտավորությունը լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում,* ***առաջին հերթին մարվում են փաստաբանի համար ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը՝ անկախ վճարման փաստաթղթում նշված նպատակից****: Փաստաբանի անդամավճարի ժամկետանց պարտքի գումարը ինքնաշխատ ձևով միացվում է փաստաբանի անդամավճարի հերթական պարտքի գումարին և ենթակա է վճարման հերթական անդամավճարը վճարելու ժամկետում»,* չի հանդիսանում փաստաբանի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտ, քանի որ այն չի հանգեցնում անդամավճարը մուծելու փաստաբանի՝ օրենքով նախատեսված պարտավորության դադարմանը կամ ծավալի փոփոխմանը, չի առաջանցում նոր պարտավորություն և չի փոխում արդեն իսկ առկա պարտավորության բովանդակութունը, այլ հստակեցնում է իրավասու մարմնի գործողությունների հաջորդականությունը՝ սահմանելով, որ եթե առկա են ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորություններ, ապա կատարված վճարումներն առաջին հերթին պետք է ուղղվեն այդ պարտավորությունների մարմանը։ Այսինքն՝ պարտավորությունների առաջնահերթ մարումը չի վատթարացնում անձի վիճակը, և հետևաբար դրան հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիության վերաբերյալ խոսք լինել չի կարող։

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը փաստաբանների պալատի բարձրագույն մարմինն է, որը հաստատում է փաստաբանների պալատի կանոնադրությունը և փաստաբանի վարքագծի կանոնագիրքը:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը փաստաբանների պալատի գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթ իրականացնող մարմինն է, իսկ 5-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը՝ լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժ նշանակելու հարցը:

Օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ պարբերության 9-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի նախագահը՝ փաստաբանի նկատմամբ հարուցում է կարգապահական վարույթ:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները, մուծել անդամավճարներ:

Օրենքի՝ «Փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հիմքերը» վերտառությամբ 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար (...):

Օրենքի «Կարգապահական վարույթի իրականացման կարգը, փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթները և հիմքերը» վերտառությամբ 39.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգը սահմանվում է նույն օրենքով և փաստաբանի վարքագծի կանոնագրքով, իսկ 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է նաև փաստաբանի սահմանած ժամկետում անդամավճար չվճարելու վերաբերյալ փաստաբանների պալատի հաշվապահի ներկայացրած տեղեկանքը:

Օրենքի «Կարգապահական խախտման վերաբերյալ հաղորդումների քննարկման կարգը և փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը» վերտառությամբ 39.3-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու առիթների և հիմքերի առկայության դեպքում փաստաբանների պալատի նախագահը որոշում է կայացնում կարգապահական վարույթ հարուցելու մասին առիթը ծագելու պահից մեկ ամսվա ընթացքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նշված ժամկետում պալատի նախագահը կամ իր հանձնարարությամբ այլ անձ կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ և այլ նյութեր:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Նույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման: Կարգապահական վարույթ հարուցվելու օրվանից նույն մասով նախատեսված վաղեմության ժամկետը կասեցվում է:

Օրենքի 39.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարգապահական գործն ըստ էության քննող և վերջնական որոշում կայացնող մարմինն է, իսկ Օրենքի՝ «Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ պալատի խորհրդի որոշումը» վերտառությամբ 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննությունից հետո պալատի խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

1) փաստաբանին նույն օրենքով նախատեսված կարգապահական տույժի ենթարկելու մասին.

2) կարգապահական վարույթը կարճելու մասին:

Օրենքի՝ «Փաստաբանների պալատի խորհրդի կողմից փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը կարճելու հիմքերը» վերտառությամբ 39.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին

կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝

1) բացակայում է կարգապահական խախտման դեպքը.

2) հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը.

(…)

5) առկա է միևնույն հիմքով և միևնույն դեպքի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու, կարգապահական վարույթի հարուցումը մերժելու կամ կարգապահական վարույթը կարճելու մասին չվերացված որոշում.

6) անցել են նույն օրենքով նախատեսված վաղեմության ժամկետները:

Օրենքի՝ «Փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը» վերտառությամբ 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը (…).

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

(…)

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի՝ «Կարգապահական գործի քննության արագացված կարգի կիրառումը» վերտառությամբ 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի սահմանած ժամկետում անդամավճար չվճարելու (…) հիմքով հարուցված կարգապահական վարույթ հարուցելիս փաստաբանների պալատի նախագահը կարգապահական գործն անմիջապես հանձնում է փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը:

Պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ հաստատվել է նոր խմբագրությամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագիրք»-ը (այսուհետ նաև՝ Կանոնագիրք), որը սահմանում է փաստաբանական էթիկայի սկզբունքները և փաստաբանի վարքագծի կանոնները, որոնք հիմնված են փաստաբանության բարոյական չափանիշների և ավանդույթների, ինչպես նաև փաստաբանական գործունեության միջազգային ստանդարտների և կանոնների վրա:

Կանոնագրքի համաձայն՝ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգը սահմանվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով և նույն կանոնագրքով (այդ թվում՝ նույն կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգ»-ով)»:

Կանոնագրքի 1.3-րդ կետի համաձայն՝ (…) Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կանոնները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Պալատի կանոնադրության, ինչպես նաև նույն Կանոնագրքի 1.1-ին կետի և ընդհանուր սկզբունքների համատեքստում:

Փաստաբանի վարքագծի կանոնների ենթադրյալ խախտման հիմքով հարուցվող կարգապահական վարույթի արդյունքում ընդունվող որոշումը

պետք է հիմնվի պատասխանատվության անհատականացման սկզբունքի վրա և Կանոնագրքի կանոնները կիրառելիս հաշվի առնի կոնկրետ իրավախախտման փաստակազմը, փաստաբանի պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները: (…) Փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվությունը չի բացառում միևնույն արարքի համար նրա նկատմամբ իրավական պատասխանատվության այլ միջոցների կիրառումը:

Ըստ Կանոնագրքի 1.4-րդ կետի՝ (…)

- կարգապահական խախտում - փաստաբանի կողմից Օրենքի, Պալատի կանոնադրության և/կամ նույն Կանոնագրքի որևէ կանոնի խախտում (…):

Կանոնագրքի 2.9-րդ կետի 2.9.1-ին ենթակետը սահմանում է, որ փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:

Կանոնագրքի՝ «Կարգապահական պատասխանատվությունը արարքի կրկնակիության դեպքում» վերտառությամբ 9.1-ին կետի 9.1.3-րդ ենթակետի համաձայն՝ առնվազն 18 (տասնութ) ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելը համարվում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում: Առաջին անգամ նույն ենթակետի հիմքով հարուցված կարգապահական վարույթի արդյունքում փաստաբանի նկատմամբ Պալատի խորհուրդը կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն, եթե փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և Պալատի խորհրդի որոշումը կայացնելու օրվա դրությամբ Պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:

Ըստ Կանոնագրքի 10.5-րդ կետի՝ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգ»-ը հանդիսանում է Կանոնագրքի անբաժանելի մասը»:

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգ»-ը, որը սահմանում է ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձանց գործունեության կարգը, կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու կարգը և ժամկետները, ինչպես նաև կարգապահական վարույթի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Ըստ նույն կարգի 1.8-րդ կետի 1.8.1-ին ենթակետի համաձայն՝ «կարգապահական վարույթ հարուցելիս, կարգապահական վարույթն իրականացնելիս և կարգապահական պատասխանատվության ենթարկելիս Պալատի նախագահը, Պալատի խորհրդի անդամը և Նախապատրաստողը անկախ են և ենթարկվում են միայն Օրենքին, Կանոնադրությանը և Կանոնագրքին»:

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգ»-ի 3.1-ին կետի 3.1.4-րդ ենթակետի՝ փաստաբանի՝ սահմանած ժամկետում անդամավճար չվճարելու (…) հիմքով հարուցված կարգապահական վարույթի գործը նախապատրաստողին չի հանձնվում:

Նույն կարգի 3.2-րդ կետի համաձայն՝ (…)

3.2.2 Ապացույցներ են կողմի բացատրությունը, վկայի ցուցմունքը, փորձագետի ցուցմունքը, գրավոր փաստաթղթերը, իրեղեն ապացույցները

(այդ թվում՝ լուսանկարները), ինչպես նաև ձայնագրություններն ու տեսագրությունները:

(…)

3.2.4 Ապացույցները ներկայացնում են կողմերը: (…):

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգ»-ի 3.3-րդ կետի համաձայն՝

3.3.1 Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: (…)

3.3.5 Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նույն կարգի 3.4-րդ կետի համաձայն՝ 3.4.1 Կողմն իրավունք ունի բացատրություն տալու գործով ապացուցման ենթակա փաստերի մասին:

3.4.2 Ապացույց է հանդիսանում միայն կողմի՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի վերաբերյալ ներկայացրած տեղեկությունը:

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգ»-ի 3.5-րդ կետի 3.5.1-ին ենթակետի՝ գրավոր փաստաթղթեր են հանդիսանում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները:

Նույն կարգի 7.1-ին կետի 7.1.11-րդ ենթակետի համաձայն՝ փաստաբանի՝ սահմանած ժամկետում անդամավճար չվճարելու (…) հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պալատի խորհուրդը կիրառում է կարգապահական գործի քննության արագացված կարգ:

«Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգը»-ի 16-րդ կետի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել, եթե անդամավճարի պարտքը գերազանցել է 15.000 (…) ՀՀ դրամը, բացառությամբ այն դեպքի, երբ փաստաբանն առնվազն մեկ անգամ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության անդամավճար չվճարելու հիմքով (այս պարագայում կարգապահական վարույթ կարող է հարուցվել հերթական անդամավճարը չվճարելու դեպքում):

Փաստաբանի նկատմամբ բոլոր դեպքերում կարգապահական վարույթ է հարուցվում, եթե փաստաբանի անդամավճարի պարտքը գերազանցել է 60.000 (…) ՀՀ դրամը (կետը փոփոխվել է 19.09.2019 թվականի թիվ 17/16-Լ որոշմամբ):

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ փաստաբանը և օգնականը, որոնք սահմանված ժամկետում չեն կարող վճարել ամենամսյա վճարը պարտավոր են պատճառների մասին գրավոր տեղյակ պահել Պալատի նախագահին, իսկ 21-րդ կետի համաձայն՝ ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:

Պալատի խորհրդի «Փաստաբանի անդամավճարների և հավակնորդի մուտքի վճարի, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների, ինչպես նաև այլ վճարների չափերը սահմանելու մասին» 05.02.2014 թվականի թիվ 3/8-Լ որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 1-ին կետով որոշվել է փաստաբանի ամսական անդամավճարի չափը սահմանել 5.000 (…) ՀՀ դրամ, բացառությամբ նույն որոշման 1.1, 1.2, 1.3 և 1.4 ենթակետերում նշված դեպքերի (կետը լրացվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 18.12.2014 թվականի թիվ 35/9-Լ որոշմամբ, 20.02.2018 թվականի թիվ 4/9-Լ որոշմամբ):

Ըստ Կանոնագրքի՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգը սահմանվում է Օրենքով և Կանոնագրքով (այդ թվում՝ Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգ»-ով), որում տեղ գտած կանոնները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն Օրենքի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության, ինչպես նաև դրանում ամրագրված ընդհանուր սկզբունքների համատեքստում՝ ի մասնավորի, պայմանով, որ փաստաբանի վարքագծի կանոնների ենթադրյալ խախտման հիմքով հարուցվող կարգապահական վարույթի արդյունքում ընդունվող որոշումը պետք է հիմնվի պատասխանատվության անհատականացման սկզբունքի վրա, իսկ Կանոնագրքի կանոնները կիրառելիս հաշվի առնվեն կոնկրետ իրավախախտման փաստակազմը և փաստաբանի պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները: Կանոնագիրքը, կարգապահական խախտումը բնորոշելով որպես փաստաբանի կողմից Օրենքի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության և (կամ) Կանոնագրքի որևէ կանոնի (պահանջի) խախտում և Օրենքի հետ մեկտեղ ամրագրելով փաստաբանի՝ սահմանված կարգով և չափով Պալատին անդամավճար վճարելու պարտականությունը, նախատեսում է, որ առնվազն 18 ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելը համարվում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում՝ մասնավորեցնելով, որ առաջին անգամ այդ հիմքով հարուցված կարգապահական վարույթի արդյունքում փաստաբանի նկատմամբ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն, եթե փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը, և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի որոշումը կայացնելու օրվա դրությամբ վերջինս ՀՀ փաստաբանների պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն վարչական գործը հարուցվել է Արսեն Դավթյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Պալատի խորհրդի 29.11.2022 թվականի թիվ ԿԳ/67-Ա որոշումը:

Դատարանը 20.11.2023 թվականի վճռով հայցը մերժել է՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան կարգավորումն առ այն, որ վճարված գումարը պետք է*

ուղղվի ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորության մարմանը, ուժի մեջ է մտել 04.03.2020 թվականից՝ (...) 11.03.2019 թվականից մինչ 04.03.2020 թվականը Հայցվորի կողմից վճարված անդամավճարները ենթակա էին հաշվարկման իր կողմից վճարման անդորրագրերում նշված ժամանակահատվածի անդամավճարի մարմանը, այն է՝ որպես 11.03.2019 թվականից մինչ 04.03.2020 թվականի համար կատարված ընթացիկ անդամավճար։

(...) 04.03.2020 թվականից ի վեր, այսինքն՝ ՀՀ փաստաբանների խորհրդի 26.12.2013 թվականի թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 8-րդ կետում լրացում կատարելու մասին որոշման ուժի մեջ մտնելուց հետո, փաստաբանի անդամավճարի գծով կատարված մարումները ենթակա էին հաշվանցման 04.03.2020 թվականից հետո գործող կարգավորման համաձայն, այն է՝ անբավարարության դեպքում պետք է մարվեր ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 11.03.2019 թվականի դրությամբ Հայցվորն արդեն իսկ ուներ 215.000 ՀՀ դրամի չափով անդամավճարի չվճարված պարտավորություն, այն, որ փաստաբանի ամսական անդամավճարի չափը կազմում է 5.000 ՀՀ դրամ, այն, որ Հայցվորն ինքն է պնդում, որ 11.03.2019 թվականից ի վեր կատարել է ամսական անդամավճարի չափով վճարումներ (և ոչ ավելի), (...) 04.03.2020 թվականից մինչ 2022 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածի համար Հայցվորի կողմից կատարված վճարումներն ուղղվել են իր նախկինում կուտակած 215.000 ՀՀ դրամի չափով անդամավճարի պարտավորությունների մարմանը, ինչն էլ բացառել է Հայցվորի կողմից կատարված վճարումներից ընթացիկ ամիսների անդամավճարների մարումը։

Տվյալ պարագայում Հայցվորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ անդամավճարների վճարումը չկատարելու և որպես ակնհայտ կոպիտ խախտում՝ առնվազն 18 ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական ամսվա անդամավճարը չվճարելու համար՝ 18 ամսվա հաշվարկը կատարելով 2021 թվականի հունվար ամսից մինչ 2022 թվականի հունիս ամիսը։ Դատարանն արձանագրում է, որ իրավական նորմերի վերոշարադրյալ վերլուծությամբ և փաստական հանգամանքների համադրմամբ կարելի է հաստատված համարել այն փաստը, որ 2021 թվականի հունվար ամսից մինչ 2022 թվականի հունիս ամիսը Հայցվորի կողմից վճարված անդամավճարները ենթակա էին ուղղման ավելի վաղ առաջացած անդամավճարների պարտավորությունների մարմանը, ինչպիսի փաստով պայմանավորված՝ կատարված վճարումները չէին կարող ուղղվել ընթացիկ անդամավճարների մարմանը։ Նշվածն իր հերթին վկայում է այն մասին, որ խնդրո առարկա կարգապահական վարույթի հարուցման պահի դրությամբ Հայցվորն ուներ առնվազն 18 ամսվա անդամավճարի չափով պարտք և չվճարված ընթացիկ անդամավճար։

Հետևապես՝ (...) Հայցվորի՝ 04.03.2020 թվականից հետո վճարված անդամավճարներից առաջին հերթին իրավաչափորեն մարվել են ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը, ինչն էլ

ուղղակիորեն հանգեցրել է Հայցվորի կողմից փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու փաստի հաստատման»:

Վերաքննիչ դատարանը 29.07.2025 թվականի որոշմամբ Արսեն Դավթյանի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Դատարանի 20.11.2023 թվականի վճիռը բեկանել և փոփոխել է՝ հայցը բավարարել է՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.03.2020թ. թիվ 5/11-Լ որոշումը չի բովանդակում որևէ անցումային կարգավորում՝ «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգ»-ում լրացված դրույթների գործողությունը բացառապես 04.03.2020թ. թիվ 5/11-Լ որոշման ուժի մեջ մտնելուց հետո առաջացած՝ անդամավճարների չվճարման պարտավորությունների վրա տարածելի լինելու վերաբերյալ, որպիսի կարգավորման բացակայությունը, սակայն, չի կարող մեկնաբանվել որպես «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգ»-ում լրացված դրույթների գործողությունը մինչև 04.03.2020թ. թիվ 5/11-Լ որոշման ուժի մեջ մտնելը առաջացած՝ անդամավճարների չվճարման պարտավորությունների վրա տարածելու հնարավորություն, քանի որ դրանով հետադարձ ուժ կհաղորդվի անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտի դրույթին (...)*

(...) Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ նորմատիվ իրավական ակտերին վերաբերող այն ընդհանուր կարգավորումները, որոնք տարածվում են նաև ներքին իրավական ակտերի վրա՝ կարելի է եզրահանգել, որ ներքին իրավական ակտն ընդունած մարմինը տվյալ իրավական ակտում համապատասխան փոփոխություն կամ լրացում կարող է կատարել միայն նույն տեսակի և բնույթի իրավական ակտով, որը պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին):

Ըստ այդմ, ներքին իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ համապատասխան իրավական ակտն ունենում է անցումային դրույթներ այն դեպքերում, երբ փոփոխություններ կամ լրացումներ սահմանող ներքին իրավական ակտի հիմնական մասով սահմանված պայմանների համար անհրաժեշտ է սահմանել տվյալ իրավական ակտի հիմնական մասով սահմանված նորմերից տարբերվող այլ նորմեր, կամ տվյալ իրավական ակտի հիմնական մասով սահմանված նորմերի ուժի մեջ մտնելուց հետո անհրաժեշտ է, ըստ որոշակի անձանց շրջանակի կամ տարածքի, սահմանել հիմնական մասով նախատեսված նորմերի գործողության համար այլ նորմեր: Ավելին՝ ներքին իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ համապատասխան իրավական ակտը պարունակում է անցումային դրույթներ նաև այն դեպքերում, երբ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին նախատեսվում է տալ հետադարձ ուժ, կամ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին հետադարձ ուժ տալու համար անհրաժեշտ է սահմանել համապատասխան նորմեր:

Մինչդեռ, այն դեպքերում, երբ ներքին իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ համապատասխան իրավական ակտի հիմնական մասը սահմանում է անձի իրավական վիճակը վատթարացնող դրույթ, սակայն տվյալ իրավական ակտը չի պարունակում անցումային դրույթներ՝ տվյալ իրավական ակտի հիմնական

մասով սահմանված անձի իրավական վիճակը վատթարացնող դրույթների գործողությունը բացառապես տվյալ ակտի ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա տարածելու վերաբերյալ, ապա այդպիսի անցումային դրույթի բացակայությունը որևէ պարագայում չի կարող մեկնաբանվել այնպես, որ ներքին իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ համապատասխան իրավական ակտի հիմնական մասով սահմանված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող դրույթներին կարելի է հաղորդել հետադարձ ուժ, քանի որ այդպիսի իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելն իմպերատիվ կերպով արգելված է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով: (...)

(...) Հայցվորը, բողոքարկելով Դատարանի վճիռը, վերաքննիչ բողոքում առաջ է քաշել հայցադիմումում տեղ գտած հիմնավորումները՝ միաժամանակ, ի թիվս այլնի, նշելով, որ տվյալ դեպքում Դատարանը չէր կարող կիրառել «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգ»-ի 8-րդ կետի (ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի «ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգում լրացումներ կատարելու հարցը քննարկելու մասին» 04.03.2020թ. թիվ 5/11-Լ որոշմամբ լրացված խմբագրությամբ) կարգավորումը՝ հաշվի առնելով, որ այն չէր կարող հետադարձ ուժով կիրառվել դրանից առաջ ծագած իրավահարաբերությունների նկատմամբ, իսկ 04.03.2020թ. հետո որոշ ամիսների համար վճարված գումարները դիտել որպես նախկին անդամավճարների չվճարման հիմքով՝ մինչև 04.03.2020թ. առաջացած ենթադրյալ պարտքի մարում և, որպես իրավական հիմք, այդ կապակցությամբ վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածը: (...)

(...) «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի իմաստով ներքին իրավական ակտ հանդիսացող ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգ»-ում լրացումներ կատարելու մասին մեկ այլ ներքին իրավական ակտը՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.03.2020թ. թիվ 5/11-Լ որոշումը, չի պարունակում անցումային դրույթներ՝ նույն իրավական ակտով «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգ»-ում լրացված դրույթների գործողությունը ՀՀ փաստաբանների պալատի և փաստաբանների միջև անդամավճարների չվճարման հետևանքով առաջացած այն պարտավորությունների վրա տարածելու վերաբերյալ, որոնք առաջացել են բացառապես ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.03.2020թ. թիվ 5/11-Լ որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ միաժամանակ արձանագրելով, որ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.03.2020թ. թիվ 5/11-Լ որոշման անցումային դրույթ չպարունակելը որևէ պարագայում չի կարող մեկնաբանվել այնպես, որ «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգ»-ի՝ որպես ներքին իրավական ակտի, 8-րդ կետում լրացում կատարելու վերաբերյալ մեկ այլ ներքին իրավական ակտով՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.03.2020թ. թիվ 5/11-Լ որոշմամբ «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգ»-ի 8-րդ կետում կատարված լրացմանը՝

որպես անձի իրավական վիճակը վատթարացնող դրույթի, կարելի է հաղորդել հետադարձ ուժ:

(...) տվյալ դեպքում հայցվորի կողմից 04.03.2020թ. սկսած ամսական անդամավճարի չափով պարբերաբար կատարված վճարումները մինչև 11.03.2019թ. առկա պարտավորությունների մարմանն ուղղելով՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.03.2020թ. թիվ 5/11-Լ որոշմամբ «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգ»-ի 8-րդ կետում կատարված լրացմանը՝ որպես անձի իրավական վիճակը վատթարացնող դրույթի, հաղորդվել է հետադարձ ուժ, ինչը, սակայն, արգելված է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով:

(...) «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգ»-ի 8-րդ կետի (ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի «ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգում լրացումներ կատարելու հարցը քննարկելու մասին» 04.03.2020թ. թիվ 5/11-Լ որոշմամբ լրացված խմբագրությամբ) կարգավորումը կարող էր կիրառելի լինել միայն այն պարտավորությունների նկատմամբ, որոնք առաջացել են 04.03.2020թ. հետո ընկած ժամանակահատվածի համար անդամավճարները հայցվորի կողմից չվճարելու պարագայում, և, ըստ այդմ, չէր կարող կիրառվել այն պարտավորությունների նկատմամբ, որոնք առաջացել են մինչև 11.03.2019թ. ընկած ժամանակահատվածի անդամավճարները հայցվորի կողմից չվճարելու հետևանքով, մինչդեռ տվյալ դեպքում «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգ»-ի 8-րդ կետի (ՀՀ փաստաբան-ների պալատի խորհրդի «ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարնե-րի վճարումների վերաբերյալ» կարգում լրացումներ կատարելու հարցը քննարկելու մասին» 04.03.2020 թ. թիվ 5/11-Լ որոշմամբ լրացված խմբագրությամբ) կարգավորումը կիրառվել է այն պարտավորությունների նկատմամբ, որոնք առաջացել են մինչև 11.03.2019 թ. ընկած ժամանակահատվածի համար անդամավճարները հայցվորի կողմից չվճարելու հետևանքով»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Պալատի խորհրդի 06.09.2019 թվականի «Փաստաբան Արսեն Դավթյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին (Անդամավճարի գործով)» թիվ ԿԳ/128-Ա որոշմամբ (կարգապահական գործ թիվ ԿԳ-19010) Արսեն Դավթյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճվել է՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) թեև փաստաբան Արսեն Դավթյանը թույլ է տվել կարգապահական խախտում, այդուհանդերձ այն իրականացրել է մեղքի բացակայության պայմաններում, որպիսի դեպքում բացակայում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:*

Միևնույն ժամանակ Խորհուրդը հարկ է համարում ընդգծել, որ կարգապահական վարույթի կարճումը չի հանդիսանում պարտավորության

դադարեցման հիմք և փաստաբանին չի ազատում անդամավճարի (215.000 (…) ՀՀ դրամ գումար) պարտքը վճարելու պարտավորությունից»:

Պալատի գլխավոր հաշվապահի և գանձապահի կողմից 15.08.2022 թվականին տրված «Փաստաբան Արսեն Դավթյանի անդամավճարի պարտքի վերաբերյալ» տեղեկանքի համաձայն՝ *«(…) փաստաբան Արսեն Դավթյանի (…) անդամավճարի ընդհանուր պարտքը 15.08.2022թ. դրությամբ կազմում է 200.000 (…) ՀՀ դրամ, որից վերջին 18 ամիսների համար՝ 2021թ. հունվարից 2022թ. հունիս ամիսը ներառյալ, կազմում է 90.000 (…) ՀՀ դրամ և վերջինս չի վճարել հերթական ամսվա անդամավճարը»:*

«Արարատբանկ» ԲԲԸ-ի մասնաճյուղի կառավարչի կողմից 08.06.2023 թվականին տրվել է թիվ 85/161 տեղեկանքն առ այն, որ Արսեն Դավթյանը 19.04.2019 թվականից մինչև 07.06.2023 թվականը ներառյալ կատարել է ամսական անդամավճար՝ «արտոնագիր թիվ 722 Դավթյան Արսեն Գրիգորի վճարում ընդհանուր 255.000 ՀՀ դրամ:

Պալատի գլխավոր հաշվապահի և գանձապահի կողմից 15.08.2022 թվականին տրված «Փաստաբան Արսեն Դավթյանի անդամավճարի պարտքի վերաբերյալ» տեղեկանքի համաձայն՝ *«(…) փաստաբան Արսեն Դավթյանի (…) անդամավճարի ընդհանուր պարտքը 15.08.2022թ. դրությամբ կազմում է 200.000 (…) ՀՀ դրամ, որից վերջին 18 ամիսների համար՝ 2021թ. հունվարից 2022թ. հունիս ամիսը ներառյալ, կազմում է 90.000 (…) ՀՀ դրամ և վերջինս չի վճարել հերթական ամսվա անդամավճարը»:*

Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 16.08.2022 թվականի «Փաստաբան Արսեն Գրիգորի Դավթյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 231-Ա/ԿԳ-22064 որոշմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 5-րդ մասի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով Արսեն Դավթյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Պալատի աշխատակազմի ղեկավարի 28.11.2022 թվականի թիվ ԿԳ/403-22 տեղեկանքի համաձայն՝ Արսեն Դավթյանը փաստաբան է հանդիսանում 19.07.2007 թվականից և տեղեկանքը տրամադրելու օրվա դրությամբ չի ունեցել կարգապահական տույժեր:

Պալատի գլխավոր հաշվապահի և գանձապահի կողմից 29.11.2022 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Արսեն Դավթյանի կողմից Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 16.08.2022 թվականի թիվ 231-Ա/ԿԳ-22064 որոշմամբ՝ վերջին 18 ամիսների համար կարգապահական վարույթով հարուցված անդամավճարի 90.000 ՀՀ դրամ պարտքը չի մարվել: Արսեն Դավթյանի անդամավճարի 200.000 ՀՀ դրամ ընդհանուր պարտքից վճարվել է 15.000 ՀՀ դրամ և 29.11.2022 թվականի դրությամբ Արսեն Դավթյանի անդամավճարի պարտքը կազմում է 200.000 ՀՀ դրամ՝ 2022 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ:

Պալատի խորհրդի 06.09.2019 թվականի «Փաստաբան Արսեն Դավթյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին (Անդամավճարի գործով)» թիվ ԿԳ/67-Ա որոշման (կարգապահական գործ թիվ ԿԳ-22064) 1-ին կետով Արսեն Դավթյանը մեղավոր է ճանաչվել «Փաստաբանության մասին» օրենքի՝ իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությամբ 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 5-

րդ մասի և Կանոնագրքի 2.9.1 9.1.3 ենթակետերի պահանջների խախտման համար, իսկ 2-րդ կետով նրա նկատմամբ կիրառվել է տույժ՝ «խիստ նկատողություն»։

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում հայցվորի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել անդամավճարների վճարումը չկատարելու և որպես ակնհայտ կոպիտ խախտում՝ առնվազն 18 ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական ամսվա անդամավճարը չվճարելու համար՝ 18 ամսվա հաշվարկը կատարելով 2021 թվականի հունվար ամսից մինչև 2022 թվականի հունիս ամիսը։

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ 11.03.2019 թվականի դրությամբ հայցվորն ունեցել է 215.000 ՀՀ դրամի չափով անդամավճարի չվճարված պարտավորություն, որպիսի փաստն անվիճելի է։ Միևնույն ժամանակ 04.03.2020 թվականից մինչ 2022 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածի համար հայցվորը կատարել է վճարումներ, որոնք ուղղվել են նախկինում կուտակված 215.000 ՀՀ դրամի չափով անդամավճարի պարտավորությունների մարմանը, ինչն էլ բացառել է այդ վճարումներից ընթացիկ ամիսների անդամավճարների մարումը։

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից բխում է, որ 2021 թվականի հունվար ամսից մինչ 2022 թվականի հունիս ամիսը հայցվորի կողմից վճարված անդամավճարները ենթակա էին ուղղման ավելի վաղ առաջացած անդամավճարների պարտավորությունների մարմանը, ինչպիսի փաստով պայմանավորված՝ կատարված վճարումները չէին կարող ուղղվել ընթացիկ անդամավճարների մարմանը։ Հետևաբար խնդրո առարկա կարգապահական վարույթի հարուցման պահի դրությամբ հայցվորն ունեցել է առնվազն 18 ամսվա անդամավճարի չափով պարտք և չվճարված ընթացիկ անդամավճար։

Այսպիսով Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ հայցվորի կողմից 04.03.2020 թվականից հետո վճարված անդամավճարներից առաջին հերթին իրավաչափորեն մարվել են ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունները։

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայել են, քանի որ Պալատը Արսեն Դավթյանի կողմից վճարվող անդամավճարների գումարներն առաջին հերթին մինչև 11.03.2019 թվականն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարները չվճարելու հետևանքով առաջացած պարտավորությունների մարմանն է ուղղել, 2021 թվականի հունվարից մինչև 2022 թվականի հունիսն առաջացած անդամավճարի ընդհանուր պարտք ունենալու հանգամանքով պայմանավորված կարգապահական վարույթ է հարուցել իրավաչափորեն և դրա արդյունքում ընդունել Արսեն Դավթյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ օրինական և հիմնավորված որոշում, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից։

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները։

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր է: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Պալատը վճռաբեկ բողոքի համար վճարել է 30.000 ՀՀ դրամ պետական տուրք, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Պալատի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիման վրա, ենթակա է հատուցման Արսեն Դավթյանի կողմից, իսկ վերջինիս

կողմից Դատարանում և Վերաքննիչ դատարանում կատարված դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.07.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 20.11.2023 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Արսեն Դավթյանից հօգուտ ՀՀ փաստաբանական պալատի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող ***Հ. ԲԵԴԵՎՅԱՆ***

Զեկուցող ***Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ